



Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ՅԻԱՆԱԿԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Երկմտանքի Ծռվը	էջ 2
Նեղութիւններ եւ Հալածանքներ	էջ 4
Ծանուցում	էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(40.18-31)

Որո՞ւ կը նմանցընէք զԱստուած կամ ի՞նչ բանի հետ կը բաղդատէք: Կուռքի՞: Բայց ձուլագործն է որ կուռքը կը ձուլէ, ու ոսկերիչը զայն ոսկիով կը պատէ եւ արծաթէ շղթաներ կը շինէ անոր համար: Նմանապէս հիւսնը անփուտ ծառի կոճղ մը կ'առնէ եւ իր ճարտարութեամբ կ'աշխատի անկէ անշարժ կուռք մը շինելու: Այնքան տգէ՛տ էք, չլսեցի՞ք կամ ձեզի չպատմուեցա՞ւ երբեք Աստուծոյ մասին, որ երկրին հիմերը դրաւ: Աստուծոյ մասին, որ կը նստի երկրագունտէն ա՛յնքան վեր՝ որ երկրի բնակիչները մարախներու չափ կ'երեւին իրեն: Ա՛ն է որ երկինքը վարագոյրի պէս կը տարածէ եւ զայն վրանի պէս կը կանգնէ իրեն համար: Ինքն է որ իշխանները կը բնաջնջէ եւ երկրի դատաւորները կ'ոչնչացնէ: Բոյսի մը պէս անոնք հազիւ տնկուած կամ ցանուած, եւ տակաւին հողին մէջ չարմատացած՝ կը փչէ անոնց վրայ եւ կը չորնան, ու փոթորիկը զանոնք կը տանի յարզի պէս:

Արդ, «Որո՞ւ կը նմանցընէք զիս, ո՞վ կը հաւասարի ինծի», կ'ըսէ Սուրբը, Աստուած: Երկինք բարձրացուցէք ձեր

աչքերը եւ դիտեցէ՛ք. ո՞վ ստեղծեց այս բոլոր աստղերը, եթէ ոչ ան՝ որ զանոնք իրենց անուկներով կը կանչէ: Ա՛յնքան մեծ է իր իշխանութիւնը եւ սաստիկ՝ իր զօրութիւնը, որ անոնցմէ որեւէ մէկը դուրս չի գար իր խօսքէն: Ինչո՞ւ կը տրտնջաս ուրեմն, ո՞վ Յակոբ, կամ ինչո՞ւ կը մտածես, ո՞վ Իսրայէլ, ըսելով. «Տէրը իմ վիճակս չտեսաւ, իմ Աստուածս իրաւունքս մոռցաւ»: Չե՞ս գիտեր, տակաւին չհասկցա՞ր թէ յաւիտենական Աստուածն է ան, որ երկրի սահմանները ստեղծեց. որ ո՛չ կը յոգնի եւ ո՛չ կը թուլնայ, եւ անքննելի է անոր իմաստութիւնը: Ինքն է որ ոյժ կու տայ յոգնածին, կը զօրացնէ տկարացածը: Նոյնիսկ երիտասարդները պիտի յոգնին ու թուլնան, եւ կտրիճները՝ յուսալքուին, բայց Տիրոջ ապաւինողները իրենց ոյժերը պիտի վերանորոգեն եւ արծիւներու պէս թեւ ու թռիչք ունենան. պիտի վազեն առանց թուլնալու, պիտի քալեն առանց յոգնելու:

Տիրոջ ապաւինողները իրենց ոյժերը պիտի վերանորոգեն եւ արծիւներու պէս թեւ ու թռիչք ունենան.

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (4.16-5.10)

Այսուհետեւ համարձակօրէն մտտեանք Աստուծոյ աթոռին, ողորմութիւն եւ շնորհք գտնելու

համար, որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշտութեան պարագային:

Արդարեւ, ամէն քահանայապետ որ մարդոց մէջէն կ'ընտրուի, պաշտօն ունի մարդոց կողմէ Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ մտնելու եւ անոնց մեղքերուն համար նուէրներ եւ զոհ մատուցանելու: Եւ որովհետեւ ինքն ալ մարդ է, կրնայ հասկնալ մարդոց տգիտութիւնն ու փորձութիւնները եւ կարեկցիլ անոնց, քանի ինք եւս նոյն տկարութիւնները ունի: Ատոր համար է, որ ինչպէս ժողովուրդին՝ այնպէս ալ իր սեփական մեղքերուն համար պէտք է զոհ մատուցանէ:

Գիտէք նաեւ թէ ոեւէ մէկը չի՛ կրնար ինքն իրեն քահանայապետութեան պատիւը առնել, այլ Աստուած է որ զայն այդ պաշտօնին կը կանչէ, ճիշտ ինչպէս Ահարոն կանչուեցաւ: Նոյնպէս ալ Քրիստոս, ինքն իրեն չառաւ քահանայապետութեան պատիւը, այլ զայն ստացաւ Աստուծմէ, որ իրեն ըսաւ. «Դուն իմ սիրելի Որդիս ես, այսօր քեզ ծնայ», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. «Դուն յաւիտեան քահանայ ես, Մեղքիսեղեկ քահանային պէս»:

Իր երկրաւոր կեանքի ընթացքին, Յիսուս մեծ աղաղակով ու արցունքով աղօթեց եւ աղաչեց Աստուծոյ, որ կրնար զինք մահուանէ փրկել: Եւ Աստուած զինք լսեց, որովհետեւ խոնարհ էր, բայց իր չարչարանքներու փորձառութեամբ սորվեցաւ թէ ի՛նչ բան է հնազանդութիւնը: Եւ այսպէս կատարեալ ըլլալէ ետք, յաւիտեանական փրկութեան պատճառ եղաւ բոլոր անոնց համար որոնք իրեն կը հնազանդին, քանի Աստուած զինք քահանայապետութեան կոչած էր, Մեղքիսեղեկ քահանային պէս:

Աստուած զինք լսեց, որովհետեւ խոնարհ էր...:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (18.9-14)

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար դացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ մեղաւորիս մեղքերը»: Կ'ըսեմ ձեզի, - եզրակացուց Յիսուս, - ո՛չ թէ փարիսեցին, այլ մաքսաւորը արդարացած գնաց տուն. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

ԵՐԿՄՏԱՆՔԻ ԾՈՎԸ
ԳԱՌՆԻԿ Ք. Գ.

«Թերահաւատ, ընդէ՞ր երկմտեցեր», Մտ 14:31:

Յօդուածս «Երկմտանքի ծովը» անուանեցի, որովհետեւ Աստուածաշունչին մէջ երկմտ անձը՝ ծովու տատանող եւ հողմակոծ ալիքներուն ենթակայ տեսնուած է: Ըստ Յակոբոս առաքեալի՝

«երկմիտ մարդը կը նմանի ծովու ալիքներուն, որոնք հովերէն կը շարժին ու կը տարուբերին» (Յկ 1.6): Այս խօսքին երկրորդ բաժինը գրաբարին մէջ աւելի զօրաւոր արտայայտութիւն ունի, կ'ըսէ. «զի որ երկմիտն է՝ նման է հողմակոծեալ եւ տատանեալ ալեաց ծովու»: «Հողմակոծեալ»ը եւ «հովերէն կը շարժին»ը նոյն ուժգնութիւնը չունին, նոյնպէս՝ «տատանիլ»ը եւ «տարուբերիլ»ը: Առաջինը ցնցուելով երեքալն է, իսկ երկրորդը՝ պարզապէս երեքալը: Երկմիտ մարդը հողմակոծեալն է եւ տատանողը:

Բնաբանին Նոր Աշխարհաբար Թարգմանութիւնը այսպէս է. «Թերահաւատ, ինչո՞ւ կասկածեցար»: Բոլոր պարագաներուն մէջ, հասկնալի դառնալու եւ հասկնալի ընծայելու ճիգը՝ պատճառ կ'ըլլան իմաստային տարբերութիւններու շնչումին: Կասկածիլը եւ երկմտիլը իրարմէ տարբեր բաներ են: Կասկածիլը իմացական վիճակ մըն է (նկատի չունիմ Տէքարթեան մեթոտային կասկածը), իսկ երկմտիլը հոգեկան վիճակ մըն է: Առաջինը կրնայ յանգիլ երկրորդին, իսկ երկրորդը՝ առաջինին խստացումն է եւ հոգիի աշխարհին մէջ տարածումը:

Երկմտանքը հոգիի ալեխոռով տատանումն է մէկ վիճակէն դէպի միւս վիճակ: Ո՞վ է երկմիտը:

Ամենէն պարզ բացատրութեամբ, ան է՝ որ կը տատանի հոգեկան երկու վիճակներու միջեւ. Աստուծոյ վստահի՞լ թէ չվստահիլ:

Մատթէոսի, Մարկոսի եւ Յովհաննէսի աւետարաններուն մէջ դրուագ մը կայ, որ մեզի կը պատմէ Յիսուսի քալելը ալեկոծ ծովու ջուրերուն վրայ եւ աշակերտներու քով գալը: Դրուագները թէեւ տարբերակեալ, սակայն կը բովանդակեն հիմնական պատգամ մը, որ կոչ է՝ քաջ ըլլալու եւ չվախնալու:

Միայն Մատթէոսի աւետարանին մէջ է, որ դրուագը մեզի կը պատմէ նաեւ Պետրոսի ջուրերուն վրայէն քալելը, երկմտիլը, ընկղմիլը եւ Յիսուսի ձեռամբ փրկուելը:

Բնաբանը այդ պահուան մէջ Պետրոսի ուղղուած Յիսուսի խօսքն է. «Թերահաւատ, ընդէ՞ր երկմտեցեր»:

Ինչպէ՞ս հասկնալ Յիսուսի քալելը ալեկոծ ծովու ջուրերուն վրայ, նաեւ ինչպէ՞ս հասկնալ Պետրոսի քալելը:

Յոբի գիրքին մէջ Աստուծոյ մասին գրուած է թէ՛ Ան «ծովուն ալիքներուն վրայ կը քալէ» (Յոբ 9.8): Ի՞նչ ըսել կ'ուզուի այս «ծովուն ալիքներուն վրայ կը քալէ» նախադասութեամբ: Փոխաբերութեան անմիջական շրջագիծը կը վերաբերի Աստուծոյ հզօր եւ բացարձակ զօրութեան, որ անքննելի

հրաշագործութիւններ եւ անհամար սքանչելիքներ կ'ընէ, որ երկիրը իր տեղէն կը շարժէ, որ լեռները կը տեղափոխէ, որ հրաման կ'արձակէ արեւուն՝ եւ անիկա չի ծագիր: Աստուծոյ համար ամէն ինչ կարելի է. բնութիւնը անոր ստեղծագործութիւնն է, եւ ան կը տիրէ բնութեան վրայ:

«Ծովուն ալիքներուն վրայ կը քալէ» փոխաբերութիւնը՝ մեզի կը յիշեցնէ Ծնունդներու գիրքին 1.2-ն: Գրուած է. «Երկիրը անձեւ ու պարապ էր եւ անդունդին վրայ խաւար կար եւ Աստուծոյ Հոգին ջուրերուն վրայ կը շարժէր» (գրաբարը «կը շարժէր»ին տեղ՝ «շրջէր» կ'ըսէ): Եւ ասիկա կը կանխէ Աստուծոյ ստեղծագործական աքթը, երբ լոյսը եղաւ, եւ երբ կեանքը եղաւ: Այս լուսաբանականը ի՞նչ կապ ունի Յիսուսի ծովու ջուրերուն վրայ քալելուն հետ: Դրուագին այն պատկերը՝ ստեղծագործութիւնը կանխող ժամուն կը համապատասխանէ, երբ Աստուծոյ Հոգին ջուրերուն վրայ կը շրջէր:

Արդ, ի՞նչ է, որ Յիսուսի միջոցով կը ստեղծագործուի:

Նոր արարչութիւնը, «չնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն» կեանքը:

Ինչպէ՞ս:

Երկմտած եւ ընկղմած մարդուն վերյառնումով: Պետրոս կը խորհրդանշէ այն մարդկութիւնը, որ Յիսուսի պէս քալել կ'ուզէ, սակայն երկմտանքի մէջ է, եւ այդ պատճառով ալ կ'ընկղմի:

Աստուածաշունչը ցոյց կու տայ, որ երկմիտը իբր անհաստատ էակ՝ չի կրնար Աստուծմէ ակնկալութիւն ունենալ (հմտ Յկ 1.5-8): Ան իր հոգիին անհաստատութեամբ ինքզինք յանձնած կ'ըլլայ կորուստի: Եւ եթէ փրկուի, ատիկա Աստուծոյ շնորհքը կ'ըլլայ, եւ կը ծառայէ Անոր փրկագործական ծրագրին:

Աստուծմէ ակնկալածը կ'ունենայ ան՝ որ վստահութիւն ունի Աստուծոյ վրայ: Նոյնիսկ անկարելին կ'ունենայ. ա՛յդ է, որ կ'ըսէ հետեւեալ պատկերաւոր պատգամը. «Վստահ եղէք, ով որ այս լերան ըսէ. Ե՛լ եւ ծով ինկիր, եւ եթէ մտքին մէջ չտարակուսի, այլ հաւատայ թէ իր ըսածը պիտի ըլլայ, ի՛նչ որ ըսէ՝ պիտի կատարուի» (Մկ 11.23): Անշուշտ այս վստահութիւնը ինքնահիացական վստահութիւնը չէ, այլ՝ Աստուծոյ վրայ հաւատքը:

Երկմտութիւնը պատճառ է անարդարութեան եւ կռիւի (հմտ Եբր 10.38-39, Առ 26.20): Հետեւաբար, հոն ուր անարդարութիւն եւ կռիւ կայ՝ այնտեղ երկմտութիւն կայ: Հոն ուր երկմտութիւն կայ՝ այնտեղ մահ կայ:

Այսօրուան մշակոյթը ընդհանրապէս երկմտանքի մշակոյթ է, իսկ մենք ալ մէջն ենք անոր:

Պետրոսի փրկութենէն ետքը, աւետարանիչը կ'ըսէ. «Եւ երբ նաւակ բարձրացան, հովը դադրեցաւ: Նաւակին մէջ գտնուող աշակերտները երկրպագեցին Յիսուսի» (Մտ 14.32-33):

Նաւակը եկեղեցին կը խորհրդանշէ, ճշմարիտ եկեղեցին՝ որ խաղաղութեան վայրն է եւ խաղաղութիւն կը բերէ:

Ոչխարներ: Գայլեր:
Երկու խորհրդանշաններ կը գործածէ Յիսուս:

Ի՞նչ կը ներկայացնէ առաջինը, եւ ի՞նչ կը ներկայացնէ երկրորդը:

«Խորագէտ եղէք օձերու պէս, եւ անմեղ՝ աղաւնիներու պէս» խօսքը մասնակիօրէն «ոչխարներ» խորհրդանշանին բացատրութիւն մը կու տայ կամ մասնակի պարզաբանում մը կը կատարէ:

Երբ կ'ըսենք «ոչխար», կամ երբ որեւէ կենդանիի անուն կը գործածենք իբր խորհրդանշան, ինչպէ՞ս անոր իմաստը կը հասկնանք:

Ընդհանրապէս կը նայինք, թէ այս կամ այն կենդանին ինչպէ՞ս կը ճանչցուի: Օրինակ մեր սովորական լեզուին մէջ բացատրութիւններ կան որ կը գործածենք. կ'ըսենք՝ «Ոչխարի պէս մարդ է»: Ի՞նչ կը հասկնանք այս խօսքով: Թէ ան պարզամիտ է, կամ անկեղծ է, կամ՝ խոնարհ:

Գանք Աստուածաշունչին:
Հին Կտակարանին մէջ ոչխարը գոհի կամ գոհագործութեան կապուած կենդանի մըն էր:

Ասկէ կարելի է հասկնալ Յիսուսի միտքը, թէ իր աշակերտները պատրաստ պէտք է ըլլային իրենց անձերը ընծայաբերելու:

Յիսուս սկիզբէն իր աշակերտներուն յստակ կը դարձնէ, թէ զիրենք չի զրկեր իբր զօրավարներ, այլ առաքեալներ՝ որոնք զոհուելու պատրաստ պէտք է ըլլան:

«Ահա կը դրկեմ ձեզ իբրեւ ոչխարներ՝ գայլերու մէջ»:

Երբ գայլ կ'ըսուի, ի՞նչ կը հասկնանք:
Մէկը որ մնայուն ձգտումը ունի յարձակելու, բզկտելու եւ յօշոտելու:

Յիսուս իր աշակերտներուն կանխաւ կը յայտնէ, թէ իրենց դիմաց պիտի գտնեն մարդիկ՝ որոնք յարձակելու եւ զիրենք սպաննելու ձգտումը պիտի ունենան: Յիսուս զանոնք սկիզբէն կը հրաւիրէ այն գիտակցութեան, թէ իրենց դիմաց պատրաստ դաշտ մը չէ, որ պիտի գտնեն: Անկասկած, պիտի ըլլան զիրենք սիրով ընդունողներ, սակայն պիտի ըլլան նաեւ մարդիկ՝

ՄԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ՄԱՏԹԷՈՍԻ
ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

ՀԵՂԻԱԿ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆ
ԽԱՐԵԱՐՐ՝ ԳԱՆԱԿ Ք. Գ.

Սիրելի ընթերցող,
Երկար ժամանակ է, որ ակամայ Զարեհ Արք. Ազնաւորեանի Մատթէոսի Աւետարանին սերտադուծիւնը քննելու համար մատուցեցի: Ահա կը վերսկսիմ:

ԳՔ

Ժ ԳԼՈՒԽ

ՆԵՊՈՒԹԻՒՆԱՆԵՐ ԵՒ ՀԱՄԱՐԱՆՆԵՐ (16-25):

«Ահա կը դրկեմ ձեզ իբրեւ ոչխարներ՝ գայլերու մէջ: Ուստի խորագէտ եղէք օձերու պէս, եւ անմեղ՝ աղաւնիներու պէս: Զգո՛յջ եղէք, որովհետեւ պիտի գտնուին մարդիկ, որոնք ձեզ դատարան պիտի տանին եւ իրենց ժողովարաններուն մէջ ձեռնեն: Իմ պատճառովս ձեզ կառավարիչներու եւ քաղաւորներու դիմաց պիտի հանեն, որպէսզի անոնց եւ բոլոր ազգերուն իմ մասին վկայութիւն տամ: Արդ, երբ ձեզ դատելու տանին, մի՛ մտահոգուի՛ք թէ ի՛նչ պիտի ըսէք եւ ի՛նչպէս. որովհետեւ ինչ որ պիտի ըսէք՝ այդ ժամուն պիտի տրուի ձեզի, քանի խօսողը դուք պիտի չըլլաք, այլ ձեր Հօրը Հոգին պիտի խօսի ձեր միջոցով:»

Երբայրը իր եղբայրը մահուան պիտի մատնէ, հայրը՝ իր զաւակը: Զաւակներ իրենց ծնողներուն դէմ պիտի ելլեն եւ սպաննեն զանոնք: Ամէն մարդ ձեզ պիտի ատէ իմ պատճառովս: Բայց ով որ միևնչեւ վերջը դիմանայ, անիկա պիտի փրկուի:

Եւ երբ հալածեն ձեզ քաղաքի մը մէջ, ուրիշ քաղաք մը փախէք, եւ եթէ հոնկէ ալ հալածեն՝ փախէք այլ քաղաք մը: Վստահ գիտցէք, որ պիտի չկրնաք վերջացնել Իսրայէլի քաղաքները՝ Մարդու Որդիին գալուստէն առաջ:

Աշակերտը իր ուսուցիչէն գերիվեր չէ, ոչ ալ ծառան՝ իր Տիրոջմէն: Հերիք է աշակերտին, որ իր ուսուցիչին պէս ըլլայ, եւ ծառային՝ իր Տիրոջ պէս: Եթէ տանտէրը Բէնդզերուղ կոչեցին, հարկաւ նոյնը աւելիով պիտի ըսեն անոր ընտանիքի անդամներուն:»

որոնք պիտի չընդունին կամ դիւրաւ պիտի չընդունին գիրենք: Եւ չընդունողները պիտի ըլլան գայլերու պէս, պիտի ըլլան կատաղի եւ չխնայեն:

«Խորագէտ եղէք օձերու պէս»:

Ասիկա ոմանց համար գայթակղեցուցիչ կը թուի:

Օձը առհասարակ մեզի համար չարին խորհրդանշանն է, որուն հետ կամ քով դժուար թէ կարենանք քրիստոնեայ նկարագիրը բերել:

Ի՞նչ ըսել կ'ուզէր Յիսուս:

Օձին յոռի ընկալումէն զատ, կայ նաեւ անոր դրական ընկալումը: Անիկա իմաստութեան խորհրդանշան ալ եղած է, եւ մինչեւ այսօր նաեւ կը շարունակէ ծառայել նոյն նշանակութեամբ:

Յիսուս ըսել ուզած է, որ իր աշակերտները թող իմաստուն ըլլան: Իմաստուն վարուելակերպը յանձնառութեամբ յառաջ կը տանի բարի գործը, միաժամանակ այնպիսի զգուշաւորութեամբ կը շարժի, որ մահուան սպառնալիքը սեփական գլխուն չհասնի: Սակայն այս զգուշաւորութիւնը վախկոտութեան զգուշաւորութիւնը չէ, այլ պարզապէս կը ծառայէ բարի գործի իրագործման. բարի գործի տարածման եւ ամբողջացման ծառայող զգուշաւորութիւնն է: Յիսուսի յորդորն է՝ անհարկի կերպով ինքզինք վտանգի չենթարկել:

«Եւ անմեղ՝ աղաւնիներու պէս»:

Գրաբարը կ'ըսէ՝ «միամիտ»: Այսօր երբ այս «միամիտ» բառը լսենք՝ կը խնդանք, քանի որ մեր լեզուին մէջ միամտութիւնը դրական նշանակութիւն մը չունի:

Ժամանակի ընթացքին, որեւէ լեզուի մէջ բառերը իմաստ կը փոխեն: Գրաբարին մէջ «միամիտ» բառը կը նշանակէր «մէկ միտք ունեցող»: «Միամիտ» համարուած կամ կոչուած ենթական մէկ տեսակի համոզում ունեցողն էր, այլ բացատրութեամբ մը՝ մէկ բանի վրայ բացարձակ վստահութիւն ունեցողը: Անոր հակառակ բառն էր եւ իր սկզբնական իմաստը կը պահէ «երկմիտ»ը: Երկմիտ ենթական երկու միտքի մէջ է. յստակ չի գիտեր, թէ ո՞ր մէկն է ճիշդ. ա՞յս միտքը, թէ՞ այն միտքը:

Գրաբարեան «միամիտ» բառին երկրորդ

իմաստն է՝ պարզ եւ անկեղծ: Մէկը որուն մէջ կեղծիք չկայ: Մէկը որ ինչ որ կ'ըսէ՝ իր մտածածը կ'ըսէ եւ ոչ ուրիշ բան: Ամենայն անկեղծութեամբ արտայայտուող մարդն է: Ուրեմն, անկեղծ նկարագիրն է:

Արդ, Յիսուս կ'ուզէ, որ իր աշակերտները ըլլան հաստատ իրենց համոզումին մէջ, եւ իրենց վարուեցողութիւնը անկեղծ ըլլայ:

Ապա Յիսուս կը զգուշացնէ մարդոցմէ, որոնք գիրենք դատարան պիտի տանին, կամ իրենց ժողովարաններուն մէջ ծեծեն, կամ կառավարիչներու եւ թագաւորներու դիմաց հանեն: Ասոնք են ակնարկուած «գայլեր»ը:

Դատարանի եւ ժողովարանի մասին կ'ակնարկէ Յիսուս:

«Դատարան» բառը պէտք չէ հասկնալ այսօրուան իմաստով, որ պետութեան իրաւական մէկ կառույցն է: Այն ժամանակուան դատարանը՝ ազգային էր: Երբայեցիները ունէին բարձրագոյն դատարան մը, որ Երուսաղէմի մէջ էր: Իսկ ժողովարանը անոնց աղօթավայրն էր: Ժողովարանները նաեւ տեղական դատարաններ էին, ուր համայնքային զանազան դատեր կը տեսնուէին, պատիժներ կը սահմանուէին: Պատիժները կրնային ծեծ ալ ըլլալ: անշուշտ աղօթավայրին մէջ չէ, որ կը ծեծէին, այլ ժողովարանը կ'ունենար ծեծի անկիւն մը, ուր այդ պատիժը կը կիրարկուէր:

Կառավարիչներու ակնարկութիւնը կը վերաբերի Հռոմի կողմէ նշանակուած այն պաշտօնեաներուն՝ որոնք յաջորդաբար իշխանութիւն ունէին Պաղեստինի վրայ:

Թագաւորներու ակնարկութիւնն ալ կը վերաբերի թէ՛ Հռոմի կայսրերուն եւ թէ՛ Պաղեստինի մէջ Հռոմի ճորտ թագաւորներուն:

«...որպէսզի անոնց եւ բոլոր ազգերուն իմ մասիս վկայութիւն տաք»:

Յիսուս կանխաւ կը յայտնէ, թէ իր աշակերտներուն դատարան եւ ժողովարան տարուիլն ու դատուիլը, կառավարիչներու եւ թագաւորներու առջեւ հանուիլը պիտի ծառայէ իր մասին վկայութիւն տալու, որ իր կարգին պիտի ազդեցութիւն ունենայ Աւետարանի քարոզութեան տարածումին:

Յիսուս քաջութիւն կը յորդորէ, եւ կը

հասկացնէ թէ՛ իր աշակերտներուն գործը ճիշդ այնտեղ է, որ կը սկսի: Դատարանները, ժողովարանները, կառավարիչներուն ատեան-ները եւ թագաւորներուն դահլիճները սքանչելի վայրեր էին քարոզչութեան:

«Արդ, երբ ձեզ դատելու տանին, մի՛ մտահոգուիք թէ ի՛նչ պիտի ըսէք եւ ի՛նչ պէտք ուրովի ետեւ ինչ որ պիտի ըսէք՝ այդ ժամուն պիտի տրուի ձեզի, քանի խօսողը դուք պիտի չըլլաք, այլ ձեր Հօրը Հոգին պիտի խօսի ձեր միջոցով»:

Յիսուս կ'ուզէ իր աշակերտներուն ներշնչել ինքնավստահութիւն: Ինքնավստահութիւն մը որ անձէն չի գար, այլ Հօր Աստուծոյ Հոգիէն: Յիսուս կը խոստանայ Աստուծոյ օգնականութիւնը Ս. Հոգիին միջոցով: Այս խոստումը պատրանք մը չէ, այլ իրական է: Աստուածաշունչին մէջ կը տեսնենք, որ բոլոր Աստուծոյ հաւատարիմները վայելած են Աստուծոյ օգնականութիւնը, եւ Անոր Հոգիով զօրացած են ու իրենց վստահուած առաքելութիւնը կատարած:

Յիսուս ըսել չէր ուզեր, թէ աշակերտներուն բանականութիւնը պիտի դադրէր գործելէ եւ միայն Աստուծոյ Հոգին պիտի ազդէր եւ իրենք խօսէին: Ո՛չ: Իրենք իրենց խելքն ու միտքը պիտի գործածէին, սակայն իրենց մարդկային ճիգին պիտի գար միանալու եւ զայն ուղիղ դարձնելու եւ զօրացնելու՝ աստուածային Հոգին:

Երբ Յովհաննէսի աւետարանը կը կարդանք, նախքան իր ձեռքակալումը եւ մահուան դատապարտութիւնը՝ Յիսուս իր աշակերտներուն խօսեցաւ Մխիթարիչ Ս. Հոգիին մասին եւ ըսաւ թէ

- ան պիտի յիշեցնէ ինչ որ Քրիստոս սորվեցուցած է,
- ան պիտի նոր ճշմարտութիւններ սորվեցնէ, եւ
- ան պիտի ուղղէ եւ առաջնորդէ ձեր առնելիք որոշումներուն եւ ընելիքներուն մէջ (տե՛ս ՅՆ 16.13-15):

Թէեւ այս խօսքերը յետ յարութեան խոստում են, սակայն կը լուսաբանեն մեր հատուածը:

«Եղբայրը իր եղբայրը մահուան պիտի

մատնէ, հայրը՝ իր զաւակը: Զաւակներ իրենց ծնողներուն դէմ պիտի ելլեն եւ սպաննեն զանոնք: Ամէն մարդ ձեզ պիտի ատէ իմ պատճառովս: Բայց ով որ մինչեւ վերջը դիմանայ, անիկա պիտի փրկուի»:

Շատ ցաւալի կանխատեսութիւն մըն է ասիկա:

Աշխարհի իրականութիւն մը կայ, որուն առջեւ մեր աչքերը չենք կրնար փակել: Գիտենք, որ կեանքին մէջ նիւթն ու ստացուածքը, համոզումն ու գաղափարը, զգացական տրամադրութիւնները պատճառ կ'ըլլան մարդոց միջեւ լարումի եւ կը հասնին մինչեւ սպանութեան:

Հակադրութիւնները հոգեւոր համոզումներուն մէջ ալ կրնան ծագիլ եւ բարդանալ ու յանգիլ ոճիրներու եւ սպանութիւններու, մինչեւ իսկ պատերազմներու:

Որեւէ մէկուն երեսին երբ ճշմարտութիւնը ըսէք՝ ան կրնայ վիրաւորուիլ, եւ նոյնիսկ կրնայ թշնամանալ: Ըշմարտութիւնն է, որ ամենէն աւելի թշնամի ունի: Նոյնպէս՝ սէրը:

Յիսուս ցոյց կու տայ կեանքի դառն իրականութիւնը, թէ անոնք որ իրեն հետեւին կամ պիտի հետեւին՝ իրենց սիրոյն եւ ճշմարտութեան պատճառով թշնամանք պիտի տեսնեն, ատելութիւն եւ նոյնիսկ մահ պիտի տեսնեն կամ սպաննուին:

Յիսուս յատուկ սեւեռումով մը ատելութեան կ'անդրադառնայ: Գիտենք, որ սպանութիւնը կը հետեւի ատելութեան: Բայց Յիսուս ատելութեան կ'ակնարկէ, սպանութեան մասին ակնարկելէ յետոյ: Այս երեւոյթը մեզի կը թելադրէ, որ Յիսուս կը սեւեռէ ատելութիւնը:

Ատելութիւնը այնպիսի չար ուժ մըն է, որ մարդիկը ամբողջութեամբ իրարմէ կը հեռացնէ: Ատելութիւնը մեզ ամենէն խորունկ կերպով կը վիրաւորէ, մանաւանդ երբ կու գայ մեր մտերիմներէն:

Ամէն մարդ ալ սիրուելու ցանկութիւնը

Ճշմարտութիւնն է, որ ամենէն աւելի թշնամի ունի: Նոյնպէս՝ սէրը:

ունի, եւ երբ կը տեսնէ, որ իր շրջապատը սիրով կամ գովասանքով կ'արտայայտուի՝ շոյուած կը զգայ ինքզինք: Ասիկա մարդկային բնական զգացում մըն է: Ասոր դիմաց երբեմն կը սարսափինք այն հեռանկարէն՝ որ մարդիկ մեզ փոխանակ սիրելու՝

Նախապատ-
րաստուած
մարդը
հարուածը
շատ աւելի
թեթեւ կ'առնէ
քան այն
մարդը՝ որ
անպատրաստ
է:

կրնան ատել: Յիսուս իր աշակերտները կը պատ-
րաստէ ո՛չ թէ միայն գի-
րենք սիրողները ընդունե-
լու, այլ նաեւ գիրենք
ատողները ընդունելու:
Յիսուսի պատգամն է, որ
ատելութիւնը երբեք պէտք
չէ ցնցէ իր հետեւորդները:
Այլ անոնք սկիզբէն պէտք

է գիտնան, թէ սիրոյ եւ ճշմարտութեան իրենց առաքելութիւնը ատելութեան պիտի հանդիպի: Անշուշտ իբր մարդիկ երկաթ կամ պողպատ չենք՝ կ'ազդուինք: Բայց Յիսուս կը յորդորէ ըլլալ քաջ եւ պահել սիրոյ եւ ճշմարտութեան յանձնառու ընթացքը՝ փոխանակ ատելութեան ատելութեամբ հակա-
դարձելու: Նախապատրաստուած մարդը հարուածը շատ աւելի թեթեւ կ'առնէ քան այն մարդը՝ որ անպատրաստ է:

Յիսուս իր աշակերտներուն կը յայտնէ համբերութեան եւ յարատեւութեան արդիւ-
նաւէտութիւնը: Առաքելութեան պատրաստ
ըլլալը չի բաւեր: Մարդոց հակազդեցութեան
հանդէպ պատրաստուածութիւնն ալ չի բաւեր:
Կան տակաւին ուրիշ պայմաններ, եւ անոնք
համբերութիւնը եւ յարատեւութիւնն են:
Առանց համբերութեան եւ յարատեւութեան
առաքելութիւնը եւ պատրաստուածութիւնը
ապարդիւն կը մնան: Մինչեւ վերջին պահը
պատնէջի վրայ մնացողն է, որ փրկութեան
արժանի կ'ըլլայ:

«Եւ երբ հալածեն ձեզ քաղաքի մը մէջ, ուրիշ
քաղաք մը փախէ՛ք, եւ եթէ հոնկէ ալ հալածեն՝
փախէ՛ք այլ քաղաք մը: Վստահ գիտցէ՛ք, որ
պիտի չկրնաք վերջացնել Իսրայէլի քաղաքները՝
Մարդու Որդիին գալուստէն առաջ»:

Չեմ ուզեր ծանրանալ այս հատուածին վրայ,
որովհետեւ պարզ է ըստածը: Միայն կ'ուզեմ
յիշեցնել, թէ փախելու խօսքը սերտորէն

կապուած է զգուշաւորութեան պատուէրին,
եւ ուստի պէտք է առնել սեփական կեանքը
ազատելու հասկացողութեամբ, այլ իբր քայլ
մը՝ առաքելութիւնը շարունակելու այլ վայրի
մը մէջ, որպէսզի Աստուծոյ արքայութեան
աւետիսը տարածուի:

«Աշակերտը իր ուսուցիչէն գերիվեր չէ, ոչ
ալ ծառան՝ իր տիրոջմէն: Հերիք է աշակերտին,
որ իր ուսուցիչին պէս ըլլայ, եւ ծառային՝ իր
Տիրոջ պէս»:

Ինչի՞ մասին կը խօսի Յիսուս: Աշխարհի մէջ
միլիոնաւոր ուսուցիչներ կան եւ բազմապատիկ
աւելի՝ աշակերտներ: Արդեօ՞ք Յիսուս
սովորական ուսուցիչի եւ աշակերտի մասին կը
խօսի: Յիսուս երբեք չ'ըսեր, որ աշակերտները
իրենց ուսուցիչէն աւելի պէտք է զարգանան,
կամ չեն զարգանար: Այդ զարգացումը եթէ
չըլլայ՝ կեանքը յառաջ չ'երթար: Յիսուսի
խօսքը կը վերաբերի իրեն իսկ՝ Երկնաւոր
Վարդապետին եւ իր աշակերտներուն:
Որոշապէս ոեւէ մէկը չի կրնար աւելի մեծ
ըլլալ քան մեր Տէրը՝ Քրիստոս: Քրիստոսի
հետեւորդները իր ծառաներն են, որոնք զինք
կը ճանչնան եւ կը խոստովանին իբր իրենց
անձերուն Տէրը, հետեւաբար՝ զայն կ'ընդունին
իբր գերիվեր իրենցմէ:

Յիսուս իր այս խօսքով գերակայութեան
եւ ստորակայութեան հարց մը չէ, որ կը դնէ:
Իր պատուէրին համաձայն, բաւարար է, որ
աշակերտը նմանի իր ուսուցչին, իսկ ծառան
ալ նմանի իր տիրոջ: Նմանելու պատուէրը
կապկումի կոչ չէ: Ինքզինք իր Վարդապետին
եւ ինքզինք իր Տիրոջ նոյնացնելու պատուէր է
անիկա, այլ խօսքով գտնուելու Երկնաւոր Հօր
պէս կատարեալ ըլլալու ճանապարհին մէջ:

Եւ ան որ այդ ճանապարհին մէջ գտնուի,
ինք եւս պիտի անարգուի ու չարախօսութեան
թիրախ պիտի դառնայ, ինչպէս իր հաւատքին
առաջնորդը:

Յիսուս իր աշակերտներուն կանխաւ
յստակ կը դարձնէ, թէ իրենց առջեւ երկարող
ճամբան մութ է, թէեւ անոր վախճանին կայ
լոյսը, որովհետեւ ստոյգ է յարութիւնը եւ
Աստուծոյ կողմէ իրեն հաւատարիմներուն
փառաւորումը:

(Շարունակելի 42)

ԱՅԾԵԼԵԾԷ՛Ք

Ս. ՅԱՎՈՐ ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆԱԾ
Մայր ԵԿԵՂԵՅԻՅՈՅ ՆՈՐ ԿԱՅԲԷՉՈ՝
www.sourphagop.net

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Յ Ց

Ա Մ Ա Ն Ո Ր

ԱՌԱՓՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՒ
ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ
Ուրբաթ, 1 Յունուար 2010,
Առաւօտեան ժամը 11.00–ին:

Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Ց

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Երեքշաբթի, 5 Յունուար 2010,
Երեկոյեան ժամը 5.00–ին:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
Երեկոյեան ժամը 6.30–ին:
ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ

ԱՐԺ. Տ. ԳԱՌՆԻԿ ՔՀՆՅ.
ԳՈՅՈՒՆԵԱՆ
(ՀՈՎԻԻ)

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐԸ
ԿԸ ԿԱՏԱՐԵՆ՝

Գոյունեան Մաշտոց, Խշիշեան Բաֆֆի,
Ալեմեան Մանուկ, Դաւիթեան Բաֆֆի, Մալոյեան
Սասուն, Թորոսեան Լեօնարտո, Իսրայիլեան
Ալինա, Յարութիւնեան Մելիսա, Իսրայիլեան
Լինէթ, Տեմիրճեան Ռուպինա, Քիլլիսեան
Սերենա, Դաւիթեան Սերժ, Գլոնճեան Դալար,
Գոյունեան Կորին, Պապիկեան Առն,
Պարթեւեան Արամ, Պանքեան Սիեր, Պարթեւեան
Ճէսիքա, Պապիկեան Սեակ, Պարթեւեան
Լիսա:

ՏՕՆ ԾԱՆՈՒԵԱՆ

ՅԻՄՆԻՄ ԲՐԻԱՏՈՒՐ

Չորեքշաբթի, 6 Յունուար 2010

ՍԿԻԶԲ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ
Առաւօտեան ժամը 9.30

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Առաւօտեան ժամը 11.00

ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ

ԵՒ

ԿԸ ԶԱՐՈՉԷ

ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԷՆ Ս.
ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

(ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՈՒՉ)

ՀՈՎԻԻԸ

ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ ՄԷՁ

Անոնք որ կը փափաքին
հովիւին այցելութիւնը ունենալ
իրենց տունէն ներս,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Քհնյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 331 5445 x203
կամ՝ 514 909 5203 թիւերէն մէկուն: